ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Գերագույն հոգևոր խորհրդի 1976 թվականի հունվար 26 նիստի որոշումով, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ նշանակվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբաններից տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց Գերագույն հոգևոր խորհրդի այդ որոշումը: Հայոց Հայրապետը Մոսկվայի և համայն Ռուսիայի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին 7 ապրիլ 1976 թվականի Իր պաշտոնական գրությամբ հաղորդում էր այս առթիվ, որ Մոսկվայի և համայն Ռուսաց Պատրիարքության մոտ Իր ներկայացուցիչը նշանակեց տ. Տիրան վրդ. Կյուրեղյանին, որը միաժամանակ վարելու է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի և Մոսկվայի հայոց հոգևոր հովվության պաշտոնները:

Ապրիլի 1-ին տ. Տիրան վրդ. Կյուրեղյանն անցավ իր առաջնորդական փոխանորդի և հոգևոր հովվության պաշտոնների կատարմանը:

Ապրիլի 11-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնին, տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը պատարագում է Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցում և, հաղորդելով Վեհափառ Հայրապետի ողջույններն ու ուրախությունները, Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին՝ որպես Մոսկվայի հայոց նորընտիր հոգևոր հովիվ:

Ապրիլի 14-ին, չորեքշաբթի օրը, տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, ընկերակցությամբ տ. Անանիա վրդ. Արաքաջյանի, Մոսկվայի ռուսաց Պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Տուլայի և Բելևսկու միտրոպոլիտ տ. Յուվենալիի սիրալիր հրավերով, այցելում է նրան, նրա պաշտոնատեղիում: Երկու քույր եկեղեցիների պաշտոնական անձնավորությունների միջև տեղի է ունենում սիրալիր զրույց՝ ջերմ մթնոլորտում:

Ապրիլի 15-ին, հինգշաբթի օրը, Մոսկվայի և համայն Ռուսիայի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի հրավերով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, ընկերակցությամբ տ. Անանիա վրդ. Արաքաջյանի, այցելում է Նրան Մոսկվայի ռուսաց Պատրիարքարանում:

Նորին Սրբությունը ջերմորեն ու հայրաբար ողջունում է Հայոց Հայրապետի երիտասարդ ներկայացուցչին և նրան հաջողություն մաղթում՝ առաջնորդական և հովվական պատասխանատու նրա պաշտոններում:

Այս առթիվ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը տ. Տիրան վարդապետին պարգևատրում է վարդապետական ականակոռ լանջախաչով:

Տ. Տիրան վարդապետը երախտապարտ սրտով խորագգաց շնորհակալություն է հայտնում Նորին Սրբությանը՝ հայրական սիրո և հայրապետական այս բարձր ուշադրության համար:

Սույն ընդունելությանը ներկա են լինում Տուլայի և Բելևսկու տ. Յուվենալի միտրոպոլիտը և Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի անձնական քարտուղար տ. Մատվեյ Ստադնյուկ ավագ քահանան:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է տ. Տիրան վրդ. Կյուրեղյանին՝ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ և Մոսկվայի հայոց հոգևոր հովվին՝ մաղթելով նրան բեղուն գործունեություն և հաջողություն՝ ի մխիթարություն Հայոց Հայրապետի սրտի և ի հոգևոր շինություն իր խնամքին հանձնված Ռուսաստանի և Մոսկվայի համայն հայ հավատացյալների: